



ՄՐՑՈՒՅԹ «ՄԱԹԵՄԱՏԻԿԱ» ԱՌԱՐԿԱՅԻՑ

ԿԱՆՈՆՆԵՐ

«ԻմԴպրոց» կրթական կայքի և Think Engineering ծրագրավորման և ռոբոտաշինության կենտրոնի համատեղ կազմակերպած մրցույթին կարող են մասնակցել ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների 5-րդ և 6-րդ դասարանների աշակերտները:

Մրցույթի նպատակն է երեխաների մոտ զարգացնել մաթեմատիկական և տրամաբանական ունակությունները, սովորելու գործընթացը դարձնել հետաքրքիր և նորարար՝ օգտագործելով ԻմԴպրոց կրթական կայքի հարուստ բազան, իսկ IThink ծրագրավորման և ռոբոտաշինության կենտրոնը կօգնի աշակերտներին սովորել ծրագրավորման լեզուներ:

ՓՈԻԼԵՐ

Մրցույթը բաղկացած է 2 փուլից.

1-ին փուլը աշակերտները գրելու են առցանց ձևաչափով՝ «ԻմԴպրոց» կայքի միջոցով:
Մրցութային թեստը բաղկացած է լինելու տվյալ դասարանների մաթեմատիկա առարկայի ծրագրային նյութին համապատասխան առաջադրանքներից և տրամաբանական խնդիրներից:

Այս փուլի արդյունքում լավագույն արդյունք ցուցաբերած 15 աշակերտների անունները կհրապարակվեն, և նրանք կհրավիրվեն մասնակցելու 2-րդ փուլին՝ առկա ձևաչափով:

2-րդ փուլի արդյունքներով որոշվելու են հաղթողները:

ՄՐՑԱՆԱԿՆԵՐ

1-ին հորիզոնական – Apple Iphone 14

2-րդ հորիզոնական - BBC Micro:bit աշխարհառչակ ռոբոտաշինության և ծրագրավորման սարքն իր հայերեն վիդեոդասերով, անլար ականջակալ:

3-րդ հորիզոնական - անլար ականջակալ

4-րդ հորիզոնական - անլար ականջակալ

5-րդ հորիզոնական - անլար ականջակալ

6-րդ հորիզոնական - անլար ականջակալ



2-րդ փուլ անցած բոլոր 15 աշակերտները կստանան պատվոգրեր «ԻմԴպրոց»-ի և «Think Engineering» ծրագրավորման և ռոբոտաշինության կենտրոնի կողմից:

ԳՐԱՆՑՈՒՄ

Մրցույթին մասնակցելու համար պարտադիր է գրանցված լինել imdproc.am կայքում (եթե դեռ գրանցված չեք) և լրացնել մասնակցության հայտը:

- Եթե արդեն իսկ գրանցված եք imdproc.am կայքում և առնվազն մինչև ուստարվա ավարտը (մայիսի 31) ակտիվ է Ձեր ԻՄ+ բաժանորդագրությունը, ապա պետք է լրացնեք մրցույթի մասնակցության հայտը և մրցույթին կմասնակցեք լիովին **անվճար**:
- Եթե գրանցված եք կայքում, սակայն չունեք ԻՄ+ բաժանորդագրություն, մոտք գործեք Ձեր պրոֆիլ, ԻՄ+ բաժանորդագրություն բաժնից կատարեք մասնակցության վճարը՝ 1500 դրամ, այնուհետև լրացնեք մասնակցության հայտը:
Մասնակցության վճարը (1500 դրամ) կատարելու դեպքում կստանաք նաև նվեր Իմ+ բաժանորդագրություն՝ 2 օրով:
- Եթե դեռևս գրանցված չեք կայքում, ապա հետևեք վիդեո-ուղեցույցի քայլերին, գրանցվեք կայքում, կատարեք վճարումը և լրացրեք հայտը:

Ուղեցույցը կարող եք տեսնել [այստեղ](#):

Հատուկ առաջարկ՝

Վճարեք ընդամենը 4500 դրամ, ստացեք 1 տարվա Իմ+ բաժանորդագրություն և մրցույթի մասնակցության հնարավորություն:

$7000 + 1500 = 8500$ -ի փոխարեն կվճարեք ընդամենը **4500 դրամ**: